Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
հոկտեմբերի 5-ի N 1215 - Ն որոշման

ԱՎՏՈԲՈՒՄՆԵՐՈՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՍԱՐՔ ԱՎՏՈԲՈՒՄՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով կարգավորվում են օրենքով սահմանված կարգով ավտոբուսներով կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ կանոնավոր փոխադրումներ իրականացնողներ) կողմից անսարք ավտոբուսների փոխարինման վերաբերյալ հարկային մարմին տեղեկատվություն ներկայացնելու հետ կապված հարաբերությունները:

2. Անսարք ավտոբուսի փոխարեն նոր ավտոբուս շահագործելու համար կանոնավոր փոխադրումներ իրականացնողները մինչև նոր ավտոբուսի շահագործումը հարկային մարմին են ներկայացնում անսարք ավտոբուսը փոխարինելու վերաբերյալ տեղեկատվություն (այսուհետ՝ տեղեկատվություն): Տեղեկատվությունը ներառվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 275-րդ հոդվածին համապատասխան հարկային մարմին էլեկտրոնային եղանակով ներկայացվող՝ արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարությունում՝ որպես տվյալ ժամանակաշրջանի համար ներկայացված հայտարարության փոփոխություն:

3. Հարկային մարմին ներկայացվող տեղեկատվությունում պարտադիր նշվում են՝

1) կանոնավոր փոխադրումներ իրականացնողի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը), հարկ վճարողի հաշվառման համարը.

2) արտոնագրային հարկ վճարող համարվելու ժամանակաշրջանը, որի համար Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 275-րդ հոդվածին համապա-

տասխան հարկային մարմին է ներկայացվել արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարություն.

3) անսարք ավտոբուսի մակնիշը, հաշվառման համարանիշը կամ դեղին հիմնագույնի համարանիշը, նստատեղերի քանակը.

4) փոխարինող ավտոբուսի մակնիշը, հաշվառման համարանիշը կամ դեղին հիմնագույնի համարանիշը, նստատեղերի քանակը:

4. Կանոնավոր փոխադրումներ իրականացնողների կողմից սույն կարգի 3-րդ կետով սահմանված տեղեկատվությունը ներկայացնելուց հետո հարկային մարմինը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 275-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան տրամադրում է փոփոխված արտոնագիր: Ընդ որում, տվյալ դեպքում արտոնագիր տրամադրելու համար փոխարինող ավտոբուսներով իրականացվող կանոնավոր փոխադրումների մասով արտոնագրային հարկ չի վճարվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ